



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 150 - Ա
27 օգոստոսի 2014 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետով ստեղծված երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը շարադրել նոր խմբագրությամբ՝

- <<Գրիգորյան Ռաֆիկ – մարզպետ, նախագահ
- Մելքոնյան Աշոտ – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, քարտուղար
- Բադալյան Գարիկ – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Գալոյան Մամիկոն – մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Մանուկյան Պետրոս – մարզպետի խորհրդական
- Խաչատրյան Սուրիկ – մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ
- Գնդոյան Արտուր – ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

N. Ghazaryan Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ